ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

բնապահպանական խորհրդատուի ընտրություն

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն, «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ՝ բնապահպանական մասնագետի ընտրելու համար: Խորհրդատվական ծառայությունը կիրականացվի 2018-2019 թվականների Ժամանակահատվածում: Պայմանագիրը կկնքվի տարեկան կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա աշխատանքների պատշաճ կատարման պայմանով:

Խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

- Ծանոթանալ բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի (ԲԿՍՇՓ) հետ,
- Անհրաժեշտության դեպքում օժանդակել համապատասխան խորհրդատուին մշակելու անհատական Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ (ԲՍԿՊ) ընտրված դպրոցների համար,
- Անհրաժեշտության դեպքում օժանդակել բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ մշակող խորհրդատուին պլանավորելու, կազմակերպելու և անցկացնելու հանրային խորհրդատվական հանդիպումներ ծրագրի ազդեցության ներքո գտնվող մարդկանց և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ քննարկելու ԲՍԿՊ-ների նախագծերը,
- Մշակել մոնիթորինգի պլան՝ կախված շինարարության ժամանակացույցից և այցերի գրաֆիկից,
- Յուրաքանչյուր այցի ժամանակ լրացնել բնապահպանական մոնիթորինգի ստուգաթերթիկը՝ օգտվելով ԲԿՍՇՓ-ում տրված ձևաչափից, և ստեղծել լուսանկարներով փաստաթղթեր,
- Բնապահպանական կառավարման պլանների հետ անհամապատասխանության դեպքեր բացահայտելիս և/կամ որևէ տեղանքում շրջակա միջավայրի վնասելու դեպք հայտնաբերելիս՝ պետք է մշակել ուղղիչ գործողությունների պլան, հետևել գործողությունների իրականացմանը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացված վերանորոգման նախագծերում կատարել հնարավոր փոփոխություններ,
- Անհրաժեշտության դեպքում պատրաստել հաշվետվություններ:

Թեկնածուներին ներկայացվող նվազագույն որակավորման պահանջներն են.

- Խորհրդատուի որակավորումը.
  - Բարձրագույն կրթություն բնագիտական առարկաների գծով,
  - Հայերեն և անգլերեն լեզուներով գրելու ունակություններ:
- Ընդհանուր աշխատանքային փորձը.
  - Նվազագույնը 5 տարվա համապատասխան մասնագիտական փորձ,
- Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում.
  - Նախկին փորձ ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի բնապահպանական խնդիրների գնահատման ուղղությամբ (նախկինում ընդգրկվածությունը հանրային շենքերի ենթակառուցվածքների ծրագրերում կդիտվի որպես առավելություն),
- Հաղորդակցման կարողություններ:

Անհատ խորհրդատուն կգնահատվի հետևյալ կերպ.

- Խորհրդատուի որակավորումը – 30 միավոր,
- Ընդհանուր աշխատանքային փորձը - 30 միավոր,
- Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում – 40 միավոր:

Դիմող թեկնածուները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Նամակ-դիմում(կցվում է), որտեղ պետք է նշել մրցույթին մասնակցելու իրենց ցանկության մասին,

- Ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Հետաքրքրված անհատ խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառություններով և Միջազգային Զարգացման Ընկերակցության վարկերով խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի» (2011թ. հունվար) պարբերություն 1.9-ին, որտեղ շարադրված է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՀԲ-ի խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցում սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրություն» մեթոդի:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, (էլ. փոստ. cfep@arminco.com) մինչև 2018 թվականի հուլիսի 30-ի, ժամը 17:00-ը:
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ (010)57-56-90 հեռախոսահամարով:

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»
ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/
(ստորագրություն)

«____» _____ 2018 թ.